ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0019 Երևան, Մ. Բաղրամյան 19, հեռ. (+374 11) 888-107, 888-146, էլ. հասցե՝ intrel@armsai.am

№ 132-Ա «01» 04 2020 թ.

ՀՐԱՄԱՆ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՅՈԹԵՐՈՐԴ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ, ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ, ԱՌԱՋԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ, ՈՒԹԵՐՈՐԴ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ, ՉՈՐՐՈՐԴ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ, ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ, ԻՆՆԵՐՈՐԴ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԵՎ ՅՈԹԵՐՈՐԴ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ» Պարետի 2020 թվականի մարտի 31-ի N 27 որոշմամբ և հիմք ընդունելով Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2020 թվականի մարտի 18-ի N 42/44/10929-2020 գրությունը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մինչև արտակարգ դրության ժամկետի ավարտը կասեցնել Հաշվեքննիչ պալատի յոթերորդ վարչության պետի (ծածկագիր՝ 46-32.7-Ղ3-1), երկրորդ վարչության պետի (ծածկագիր՝ 46-32.2-Ղ3-1), առաջին վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 46-32.1-Մ2-4), իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 46-36[1].1-Մ2-2), ութերորդ վարչության պետի տեղակալի (ծածկագիր՝ 46-32.8-Ղ4-1), չորրորդ վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 46-32.4-Մ2-4), երկրորդ վարչության պետի տեղակալի (ծածկագիր՝ 46-32.8-Ղ4-1), իններորդ վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 46-32.9-Մ2-4), մեթոդաբանության,

վերլուծության և միջազգային կապերի վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 46-34-Մ2-6) և յոթերորդ վարչության պետի տեղակալի (ծածկագիր՝ 46-32.7-Ղ4-1) թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթները:

2. Անձնակազմի կառավարման բաժնի պետ Ռ.Բաբայանին՝
   - կապի բոլոր միջոցներով ծանուցել մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիներին,
   - մրցույթները վերսկսելու մասին որոշում կայացնելու նույն կամ հաջորդող աշխատանքային օրը կապի բոլոր միջոցներով ծանուցել մինչև մրցույթի կասեցման իրավական ակտն ընդունելու օրը դիմած քաղաքացիներին:

Հ.ԱԿԱԳՅԱՆ